«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ՀՀ, 375012, ք.Երևան, Բուզանդ 1/4, հեռ.՝54-17-89, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100,
ՀՎՀՀ 02504913

Էլ.փոստ. yerqaxluys@yerevan.am

№ 68/425
« 18 » Մայիսի 2026թ

«ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ՝
Ա. ՋԻԼԱՎՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ vankamed@mail.ru

Հարգելի պարոն Ջիլավյան,

«Երքաղլույս» ՓԲԸ-ի և «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի միջև 2026թ-ի փետրվարի 24-ին կնքված N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-26/3»-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)

1.1 կետի համաձայն՝

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը 20 օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն 27.04.2026թ-ի N1/17 մատակարարման հայտի, «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ն մինչև 07.05.2026թ-նը ներառյալ պետք է մատակարարեր 17-րդ չափաբաժնով նախատեսված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը:

«ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից 28.04.2026թ-ին դուրս գրված A 5952610545 հարկային հաշվի հիման վրա «Երքաղլույս» ՓԲԸ-ին հանձնման-ընդունման համար ներկայացվել է «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է՝

«Էմալ, ՆՑ 132, ունիվերսալ, նիտրոթաղանթանյութի հիմքով, արագ չորացող, մոխրագույն կամ սև գույնի՝ համաձայն Գնորդի պատվերի, չօգտագործված:»:

Փաստացի մատակարարված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից ենթարկվել է նմուշային փորձարկման, որի արդյունքում՝

- մետաղական խողովակները ներկելու ժամանակ առաջացել են անհարթություններ, ներկը հարթ չի նստում ներկվող մակերեսին,

-մետաղական խողովակների ներկված հատվածները ջրով լվանալու կամ կտորով շփելու արդյունքում ներկը մաքրվում է.

-ներկի տարայի տակ առկա է նստվածք, որը խառնելուց ներկը միասեռ չի դառնում.

Մատակարարված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը չի համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին և վերոհիշյալով պայմանավորված՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակի տեխնիկական բնութագրի մասով տրվել է բացասական եզրակացություն, ուստի, հիմք ընդունելով N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-26/3»-2 պայմանագրի 5.2 կետը «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից 29.04.2026թ-ին հանձնման-ընդունման արձանագրությամբ «Երքաղլույս» ՓԲԸ-ին ներկայացված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը չի ընդունվել և հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվել:

«Երքաղլույս» ՓԲԸ-ն 2026թ-ի մայիսի 05-ի թիվ 68/395 գրությամբ, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.2 կետով, «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակի **Պայմանագրին համապատասխանող որակի և քանակի** ապրանքով անհատույց փոխարինման և մատակարարման նոր ժամկետ է սահմանել **մինչև 12.05.2026թ-նը ներառյալ**:

«ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից **14.05.2025թ-ին** հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա «Երքաղլույս» ՓԲԸ-ին հանձնման-ընդունման համար ներկայացվել է «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակ:

Նոր մատակարարված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից ենթարկվել է նմուշային փորձարկման, որի արդյունքում՝

- մետաղական խողովակները ներկելու ժամանակ առաջացել են անհարթություններ, ներկը հարթ չի նստում ներկվող մակերեսին,

-մետաղական խողովակների ներկված հատվածները ջրով լվանալու կամ կտորով շփելու արդյունքում ներկը մաքրվում է.

-ներկի գույնը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով սահմանված գույնին.

Նոր մատակարարված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը ևս չի համապատասխանում Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Վերոհիշյալով պայմանավորված՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակի տեխնիկական բնութագրի մասով տրվել է բացասական եզրակացություն, ուստի, հիմք ընդունելով N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-26/3»-2 պայմանագրի 5.2 կետը, «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից **14.05.2026թ-ին** հանձնման-ընդունման արձանագրությամբ «Երքաղլույս» ՓԲԸ-ին ներկայացված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի 200կգ մոխրագույն և 50կգ սև գույնի խմբաքանակը չի ընդունվել և հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվել:

Տեղեկացնում ենք, որ «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Ուստի, հիմք ընդունելով 2026թ-ի փետրվարի 24-ին կնքված N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-26/3»-2 Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն 2026թ. մայիսի 18-ից միակողմանի լուծում է N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-26/3»-2 պայմանագիրը **17-րդ չափաբաժնով սահմանված** «Ներկ նիտրո» ապրանքատեսակի **չմատակարարված 1600կգ-ի քանակի մասով**:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը Մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝

17-րդ չափաբաժնով նախատեսված «Ներկ նիտրո» ապրանքատեսակի մասով՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին փոխանցել՝

713 (յոթ հարյուր տասներեք) ՀՀ դրամ՝ որպես յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա դիմաց տույժ՝ N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-26/3»-2 Պայմանագրի 6.2 կետի համաձայն, սկսած 08.05.2026թ-ից մինչև 14.05.2026թ-նը ներառյալ, թվով 5 աշխատանքային օրերի համար,

11400 (տասնմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ տուգանք՝ N«ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-26/3»-2 Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

228000 (երկու հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ՝ որպես «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովում,

273600 (երկու հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որպես «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի որակավորման ապահովում.

5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարումները չկատարելու դեպքում «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում, տուժանքի տեսքով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանջագրերը, տուժանքի համաձայնագրերը 1.4 կետի համաձայն կներկայացվեն «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ին սպասարկող բանկին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի կողմից, ոչ ուշ, քան գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրացուցային օրվա ընթացքում, պայմանագրի կատարման ապահովման, որակավորման ապահովման և հաշվարկած տույժի և տուգանքի գումարները վճարելու դեպքում, «ԿԱՄԷԴ» ՍՊԸ-ի նկատմամբ չի նախաձեռնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ *Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ*

Կատարողներ՝ Ա. Արաբյան,
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80